Ազգ
Azg
26 ԴԵԿՏԵՄԲԵՐ - 16 ՀՈՒՆՎԱՐ 2025-2026 ՈՒՐԲԱԹ 045(5869)
ISSN: 1829-1651
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## Շնորհավոր Ամանոր եւ Սուրբ Ծնունդ



Առաջիկա տոնական օրերին ընդառաջ «ԱԶԳ»-ը շնորհավորում է իր ընթերցողների, աշխատակիցների, հեղինակների, գործընկերների ու համայն հայության Ամանորն ու Սբ. Ծնունդը, մաղթում քաջառողջություն, մտքի ու հոգու հանդարտություն, դժվարությունները հաղթահարելու կամք, տոկունություն եւ, ինչպես մեր Սուրբ Եկեղեցին է պատգամում` Սէր ամենեքեան եւ Խաղաղութիւն ամենեցուն:

Երկշաբաթյա արձակուրդից հետո մեր թերթը կշարունակի լույս տեսնել նույն պարբերականությամբ, ուրբաթ օրերին, վերսկսելով 2026 թ. հունվարի 16-ից:

ՕՐԵՐԻ ՀԵՏ

## Ուժ կունենանք հաղթահարելու...

Արդեն 5-6 տարի է, որ մեր թերթի նախաամանորյա համարը չի կարողանում տոնական որեւէ տրամադրություն փոխանցել իր հավատարիմ ընթերցողներին: Միայն գանգատ, բողոք, քննադատություն երկրի ներսում եւ դրսում շարունակվող ձախավերությունների, բացթողումների համար, որոնց կուտակումը սպառնում է, հարցականների տակ դնում մեր պետության ու ժողովրդի ապագան: Նույնիսկ երգիծական նյութերը վերածվում են հուսահատեցնող սարկազմի, ստեղծված վիճակից ելքերի որոնումը, ժողովրդային լեզվով ասած` բայղուշության:

Նոր տարվա սեմին ոգեւորիչ ի՞նչ կարող ենք մատուցել հանրությանը, ընթերցողին: Արցախը հանձնելուց, նրա բնակչությանը բնավեր դարձնելուց հետո հայրենիքի մնացյալ մասը կտոր-կտոր թշնամուն զիջե՞լը, հանուն մի քանի մարդկանց հարստացման ցեղասպան թուրքի արարքները կոծկե՞լը, ուրանա՞լը: Իբր ինքնիշխանությունը ամրապնդելու, կասկածելի նոր բարեկամներ ճարելու նպատակով հին, պատմական բարեկամներից ու հարեւաններից մեկուսանա՞լը:

Իսկ ներքին ճակատո՞ւմ, ի՞նչ կա մնայուն ու կայուն. ճանապարհներին բարակ շերտ ասֆալտ փռելով գյուղացվոցը երջանկացնելու փողաբեր սխրա՞նքը, թոշակառուների եկամուտները 2-3 հազարով ուռճացնելու ծրագի՞րը, գործազրկությունը վտանգավորության 4 տոկոս շեմից 14 տոկոսի հասցնե՞լը, արտաքին պարտքը 8 միլիարդ դոլարի մոտեցնե՞լը, համատարած` ինքնաբուժմամբ զբաղվող ժողովրդի առողջությունը չապահովե՞լը, կրթության մակարդակը անկիրթների հոգատարությանը վստահե՞լը:

Անցնող 7 տարվա ընթացքում այդ ո՞ր նոր ճանապարհն է կառուցվել Հայաստանում, իսկ ավտոմեքենաների առատությունից շնչահեղձ անդամալույծ դարձած Երեւանում այդ ո՞ր էստակադան, կամուրջը կամ անցուղին է կառուցվել, հանրային-հասարակական նշանակության այդ ո՞ր կառույցն է շինվել, այդ ո՞ր գործարանն ու ձեռնարկությունն է վերականգնվել ու գործարկվել ու, վերջապես, մեր գիտնականներից ու գյուտարարներից, մեր բժիշկներից ու տիեզերքը հետազոտող մասնագետներից այդ ո՞ր մեկին է շնորհվել միջազգային մրցանակ ու կոչում, երբ, բարեբախտաբար, հայ ժողովրդի արմատը դեռեւս չի չորացել, ինչի ապացույցը 2 եւ 3 տարի առաջ սփյուռքահայ երկու գիտնականների արժանանալն էր բարձրագույն` Նոբելյան մրցանակների:

Այդ որտեղի՞ց եւ ո՞ւմ թելադրանքով մոգոնվեց Հայ եկեղեցու դեմ հերետիկոսական արշավ ձեռնարկելու գաղափարը, որով տարուց ավելի զբաղեցնում, տանջահար եք անում, ջլատում, երկպառակտում մեր ժողովրդին: Մեր պետությունը ի՞նչ է շահում այդ ստոր, քսու արշավանքից: Բացի նրանցից բոլորս գիտենք, «պատարագ» բառը, ինչպես ռուսերեն տՏՊՈՐՏՍ-ը, նշանակում է «ընծա», «նվեր»` առ Աստված: Արդ, կեղտոտ հոգով ու մտքով դուք չե՛ք կարող որեւէ բան ընծայաբերել Երկնավորին, չե՛ք կարող քանդել մեր Եկեղեցին:

⇨3

## Նոր տարի` քաղաքական հին կրկեսով եւ խաբված հանդիսատեսով

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ




Մեր քաղաքական կյանքն ինձ սարքովի մի բան է թվում, ինչ-որ արհեստական բան կա տեղի ունեցող ամեն ինչի մեջ: Քաղաքականությունից հեռու սովորական մարդն անգամ, երբ հետեւում է գործընթացներին, ենթագիտակցորեն զգում է, որ ստորգետնյա գետի նման ինչ-որ բան հոսում է տակից` անհասանելի եւ անտեսանելի իր համար ու իր ոտքի տակից դանդաղ քաշում -տանում է հողը: Չգիտեմ քանի մարդ այս տողերն ընթերցելիս կարող է հակառակը պնդել: Եւ այս իմաստով ինձ զարմացնում են լուրջ դեմքով քաղաքական վերլուծություններ անողները, թե բա` այս կամ այն ուժը քվեների կամ համակրանքների ի՞նչ պաշարով է մտնում ընտրական տարի, քանի՞ տոկոս կհավաքի եւ այլն: Ախր ոչ մի քաղաքական կամ քաղաքագիտական կանոն չի գործում հիմա մեր ներքին կյանքում, ու իրոք զարմանք են հարուցում քաղաքակակն նոստրադամուսների դեր ստանձնածները մեր արհեստական քաղաքական կյանքը վերլուծելիս: Սարքովիությունը, արհեստականությունը, ապականոնությունն ինչպես տասնյակ տարիներով մեր ուղեկիցն են եղել, այնպես էլ հիմա են դերակատար:

Ընդամենը պետք է սեփական աչքերով տեսած լինել անցյալը, եւ սթափ վերլուծել ներկան, ու այս դեպքում հուսալի եզրակացությունները հիշողությունը չկորցրածներինն են, ոչ թե նրանցը, ու՞մզտված, մոտիվացված տեղեկատվությամբ են կերակրում, ում պատկերացումները քաղաքական աղբի հետեւանք են:

Ընդամենն իրար կողքի դնենք փաստերը: Այնպես , ինչպես ժամանակին ՀՀՇ-ն էր արհեստականորեն սարքվում քաղաքական ուժ` նախապես գծված նպատակներով, հետագայում «Ժառանգությունը», «Բարգավաճ Հայաստանը» այսուայն մանրիկ-դրածո կուսակցությունները, նոր ժամանակում` ՔՊ-ն եւ յուր սատելիտները, այնպես էլ հիմա «Մեր ձեւովն» ու այսուայն «Թեւերն» են ինչ-որ կառույցներ սարքում- հավաքում որպես տվյալ ժամանակի քաղաքական ֆազլ` իրե՛նց ձեւով եւ իրե՛նց նպատակների համար, ժողովրդի տարբեր հատվածներին խորամանկորեն եւ հմտորեն հրելով եւ կցելով այդ բոլորին: Հայկական քաղաքականությունը կեղծ ու սարքովի, իմիտացիոն դարձնելով, ինչ-որ գրասենյակներում նախագծելով ու հետո հանրության գլխին կոտրելով:

Մի բան էր դա անցյալում, երբ օրվա իշխանավորների կամ մեր ցանկությունից անկախ` միջազգային իրավիճակները թույլ էին տալիս համեմատաբար անվտանգ մարսել այդ տնայնագործությունը (եթե չասենք` տնաքանդությունը) եւ մեր պետությունն իր ողջ ունեցվածքով ի սպաս դնել նախագծողներին, մի այլ բան է դա հիմա, երբ աշխարհն ամեն օր այնպես է փոխվում, որ չգիտես, թե արդյոք այս իմիտացիոն քաղաքական կառուցվածքներով կկարողանա՞նք դիմակայել տարածաշրջաններ կուլ տվող նախագծերին ու վտանգներին, ինչպես որ չկարողացանք դա անել 2020 թվականի պատերազմի ցավալի կորուստների ժամանակ:

⇨7

## ՌԱԿ Համադրուած Մամուլը կը շեշտադրէ

### *«Ժողովուրդը մերժեց վարչապետ Փաշինեանի ուղղորդութեամբ 10 ուխտադրուժ եպիսկոպոսներու սադրանքը»*

Լրատուութիւնը տարածուած էր յանկարծ` 10 յայտնի ուխտադրուժ եպիսկոպոսներ 18 դեկտեմբերին, հինգշաբթի երեկոյեան ժամը 5-ին, պիտի ներկայանան Մայր Աթոռ, Ամենայն Հայոց Հայրապետէն պահանջելու, որ հրաժարի եւ ինքզինք հանգստեան կոչէ:

Կայծակնային արագութեամբ, սակայն, բազմաթիւ քաղաքացիական խմբաւորումներ հակադարձեցին օրինականութեան այդ կոպիտ ու նոր խախտումին եւ նոյն ժամուն Մայր Աթոռի շուրջ հաւաքուելով պախարակեցին ուխտադրուժ հոգեւորականներու այդ քայլը:

Արդիւնքը աւելի քան յստակ եւ ցնցիչ էր: Մայր Աթոռ Ս. Էջմիածինի շրջափակը ողողուած էր հազարաւոր հաւատացեալներով, որոնք անդադար կը վանկարկէին «Վեհափառ-Վեհափառ», որպէս զօրակցութիւն Ամենայն Հայոց Հայրապետին:



Այս պայմաններուն մէջ է, որ Գարեգին Բ. Կաթողիկոսը հոգեւորականներու երկար շքախումբով, ըստ սովորականի, դուրս եկաւ Վեհարանէն եւ ուղղուեցաւ դէպի Մայր Տաճար` զանգակատան ղօղանջներուն եւ ժողովուրդին կոչերուն տակ: Եկեղեցական արարողութեան վերջաւորութեան եւ Վեհափառի հայրական յորդորներով լեցուն քարոզէն ետք թափօրը նոյն ձեւով վերադարձաւ Վեհարան` կոմիտասեան աւանդական օրհներգը հնչեցնելով` «Ամէն հայի սրտից բխած` լսիր այս ձայն, ո՛վ Աստուած, երկար կեանք տուր Հայրապետին, երկար օրեր Հայոց հօր», մինչ հաւատացեալներու հոծ բազմութիւնը աւելի բարձր կը ձայնակցէր. «Տէր, անսասան պահիր դու միշտ քո իսկ սիրած Մայր աթոռ»:

⇨2

ԳՐԻԳՈՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Իրանագետ

# Աբրահամյան համաձայնագիրը եւ Իրանի գործոնը. Հայաստանի անդամակցության հեռանկարը

***Համաձայնագրի անվանակոչության համար հիմք ծառայած Աբրահամյան կրոնների դավանաբանական ու պատմական ընդհանրությունները նկատի ունենալով, քրիստոնեությունն առաջինը որպես պետական կրոն ընդունած Հայաստանին խորհրդանշաբար հնարավոր է հակաիրանական կոալիցիային միանալու պարտադրանք ներկայացվել:***

Դեռեւս մինչեւ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ նախաստորագրված վաշինգտոնյան «խաղաղության» փաստաթղթի ի հայտ գալը ԱՄՆ նախագահ **Դոնալդ Թրամփի**՝ Մերձավոր Արեւելքի հարցերով հատուկ բանագնաց **Սթիվ Ուիթկոֆի** հայտարարությունը, թե Հայաստանն ու Ադրբեջանը մոտ են խաղաղության հաստատմանը, եւ որ Երեւանն ու Բաքուն կարող են դրանից հետո միանալ «Աբրահամյան համաձայնագրին»՝ խորհելու տեղիք է տալիս

Նշենք, որ Աբրահամյան համաձայնագիրը մեկնարկել է 2020 թվականին: Մինչ այժմ փաստաթղթին պաշտոնապես միացել են Իսրայելը, ԱՄՆ-ը (որպես միջնորդ եւ հովանավոր), Արաբական Միացյալ Էմիրությունները, Բահրեյնը, Մարոկկոն, Սուդանը (մասնակիորեն) եւ Ղազախստանը, որը հանդես է եկել համաձայնագրին միանալու մասին պաշտոնական հայտարարությամբ: Մի շարք երկրներ, այդ թվում՝ Սաուդյան Արաբիան եւ Սիրիան, նույնպես քննարկում են ապագայում համաձայնագրին անդամակցելու հնարավորությունը:

Ի՞նչ փաստաթուղթ է «Աբրահամյան համաձայնագիրը», որքանո՞վ այն կարող է առնչություն ունենալ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ նախաստորագրված փաստաթղթի հետ, եւ ինչո՞ւ Ադրբեջանի (իսկ հեռանկարում՝ նաեւ Հայաստանի) հնարավոր միանալն այդ համաձայնագրին կարող է մտահոգել Թեհրանին:

Աբրահամյան համաձայնագիրը դիվանագիտական հարաբերությունների կարգավորմանն ուղղված փաստաթուղթ է, որը ստորագրվել է Միացյալ Նահանգների միջնորդությամբ՝ Թրամփի նախագահության առաջին շրջանում, մի կողմից Իսրայելի եւ մյուս կողմից մի շարք մահմեդական երկրների միջեւ: Համաձայնագրերի փաթեթը կազմվել է Իսրայելի եւ փաստաթղթին միացած իսլամական երկրների միջեւ բազմաբնույթ համագործակցությունն ամրապնդելու նպատակով եւ ներկայացվել է որպես ԱՄՆ ռազմավարության բաղկացուցիչ մաս՝ Մերձավոր Արեւելքում նոր տարածաշրջանային կարգ հաստատելու, ինչպես նաեւ Իսրայելի անվտանգությունն ու կայունությունն ապահովելու համար:



Փաստաթղթի անվանումն առնչվում է Աբրահամյան կրոնների՝ իսլամի, քրիստոնեության եւ հուդայականության դավանաբանական ու պատմական ընդհանրություններին եւ կոչված է խթանելու տարածաշրջանային խաղաղությունն ու համագործակցությունը:

Դիվանագիտական հարաբերությունների կարգավորումից բացի՝ համաձայնագիրը նախատեսում է փաստաթղթին միացող երկրների միջեւ համագործակցության ակտիվացում ամենատարբեր ոլորտներում: Այն նաեւ միտված է ԱՄՆ-ի գլխավորությամբ տարածաշրջանային կոալիցիայի ձեւավորմանը, որը կուժեղացնի Իսրայելի դերը որպես տարածաշրջանային հիմնական խաղացող եւ կսահմանափակի այս գործընթացին հակադրվող երկրների, մասնավորապես՝ Իրանի ազդեցությունը:

Հետեւաբար, համաձայնագրի իրագործումը կարող է ամրապնդել Իսրայելի դիրքերը տարածաշրջանում եւ հանգեցնել Իրանի աշխարհաքաղաքական մեկուսացմանը: Իրանի հարեւան երկրների, օրինակ՝ Ադրբեջանի, եւ հնարավոր է նաեւ Կենտրոնական Ասիայի որոշ երկրների (օրինակ՝ Թուրքմենստանի) միացումը Համաձայնագրին կարող է ամրապնդել Իսրայելի ներկայությունն Իրանի սահմանների անմիջական հարեւանությամբ: Մասնավորապես, Իսրայելի հետ Ադրբեջանի սերտ ռազմական համագործակցությունը կարող է հանգեցնել Իրանի հյուսիսային սահմանների մոտ Իսրայելի կողմից հետախուզական եւ մոնիթորինգային ենթակառուցվածքների ստեղծմանը: Արդյունքում, ի լրումն Պարսից ծոցում Իսրայելի ներկայությանը (ԱՄԷ-ի եւ Բահրեյնի միջոցով), Իրանը ստիպված կլինի հանդուրժելու նաեւ Իսրայելի ներկայությունն իր հյուսիսային սահմաններին:

Համաձայնագիրը կարող է նվազեցնել նաեւ Իրանի ազդեցությունը տարածաշրջանում:

Միացյալ Նահանգների աջակցությունը վայելող տարածաշրջանային կոալիցիան, այսինքն՝ Աբրահամյան համաձայնագրի շրջանակը, ձգտելու է թուլացնել Իրանի աջակցությունը վայելող «դիմադրության առանցքը»: Իսրայելի եւ անդամ պետությունների միջեւ ռազմական եւ հետախուզական համագործակցության խորացման պայմաններում Իրանը կարող է զրկվել Իսրայելին արդյունավետ դիմակայելու գործառնական հնարավորություններից:

Բացի այդ, Իրանի հետ պատմական կապեր ունեցող մահմեդական երկրների միացումը Համաձայնագրին՝ կարող է հանգեցնել Իրանի դիվանագիտական մեկուսացմանը եւ թուլացնել տարածաշրջանային դաշինքներ ձեւավորելու Թեհրանի հնարավորությունները:

Իրանը կարող է բախվել նաեւ տնտեսական եւ առեւտրային մարտահրավերների: Անդամ պետությունների եւ Իսրայելի միջեւ առեւտրի եւ ներդրումների խթանումը կարող է փոխել տարածաշրջանային առեւտրային ուղիները՝ հօգուտ Իսրայելի եւ նրա դաշնակիցների: Մասնավորապես Կովկասում եւ Կենտրոնական Ասիայում սա կարող է սահմանափակել Իրանի հնարավորությունները տարածաշրջանային շուկաներ մուտք գործելու առումով: Օրինակ՝ ԱՄՆ-ի կողմից վերահսկվող տարանցիկ միջանցքների («Թրամփի ուղու») գործարկումը կարող է ազդել Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի հետ Իրանի առեւտրային կապերի վրա՝ նվազեցնելով տարածաշրջանային երկրների կախվածությունն Իրանից:

Գործընթացը կարող է բացասաբար անդրադառնալ նաեւ Իրանի քաղաքական եւ դիվանագիտական դիրքերի վրա: Աբրահամյան համաձայնագրի տարածումը ոչ արաբական երկրների, օրինակ՝ Ադրբեջանի վրա, կարող է իսլամական երկրների շրջանակում նվազեցնել Իրանի հակաիսրայելական դիրքորոշումների լեգիտիմությունը: Սա կբարձրացնի դիվանագիտական ճնշումն Իրանի նկատմամբ, հատկապես այնպիսի կառույցներում, ինչպիսին է Իսլամական համագործակցության կազմակերպությունը:

Բացի այդ, ԱՄՆ-ի կողմից Աբրահամյան համաձայնագրի անդամ պետություններին տրամադրվող տնտեսական եւ ռազմական աջակցությունը կարող է տարածաշրջանային երկրներին հեռացնել Իրանից եւ մոտեցնել ԱՄՆ-Իսրայել առանցքին:

Աբրահամյան համաձայնագրերի համատեքստում կարեւոր է նաեւ անդրադառնալ հայ-ադրբեջանական խաղաղության համաձայնագրի դերին: Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ 2025 թվականի օգոստոսին Սպիտակ տանը՝ ԱՄՆ միջնորդությամբ նախաստորագրված խաղաղության համաձայնագիրը, ինչպես խոստովանել է Սթիվ Ուիթկոֆը, կարող է կարեւոր դեր ստանձնել Աբրահամյան համաձայնագրի նպատակների իրագործման ճանապարհին: Բազմաթիվ աղբյուրներ, այդ թվում՝ Reuters-ը, վկայում են, որ ԱՄՆ կառավարությունը Ադրբեջանի եւ Հայաստանի միջեւ խաղաղությունը դիտարկում է որպես նախապայման՝ Ադրբեջանի՝ Աբրահամյան համաձայնագրերին միանալու համար:

Կովկասում կայունության հաստատումը ճանապարհ է հարթում Ադրբեջանի համար՝ Իսրայելի հետ դիվանագիտական եւ ռազմական հարաբերությունները խորացնելու ուղղությամբ: Այդ տեսանկյունից Ադրբեջանի հնարավոր միացումը Աբրահամյան համաձայնագրին կարեւոր է նաեւ Իրանի սահմաններին մոտ գտնվող նրա ռազմավարական դիրքի պատճառով:

Ինչ վերաբերում է Հայաստանի՝ Աբրահամյան համաձայնագրին միանալու հեռանկարին, ապա չպետք է մոռանալ Համաձայնագրի անվանակոչության համար հիմք ծառայած Աբրահամյան կրոնների դավանաբանական ու պատմական ընդհանրությունների համատեքստում քրիստոնեությունն առաջինը որպես պետական կրոն ընդունած Հայաստանի դերը, որին հնարավոր է խորհրդանշաբար հակաիրանական կոալիցիային միանալու պարտադրանք ներկայացվել:

# ՌԱԿ Համադրուած Մամուլը կը շեշտադրէ

## *«Ժողովուրդը մերժեց վարչապետ Փաշինեանի ուղղորդութեամբ 10 ուխտադրուժ եպիսկոպոսներու սադրանքը»*

⇨1 Այսպէսով, ուղղորդուած ուխտադրուժ եպիսկոպոսներու սադրանքը նուաստացումով եւ խեղճութեամբ հասաւ իր աւարտին:

Մեր՝ Ռամկավար Ազատական Կուսակցութեան Համադրուած Մամուլի կոչը կը մնայ նոյնը, այս ազգավնաս կեղծ տագնապին սկզբնաւորութենէն ի վեր:

ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ
ՀԱՄԱԴՐՈՒԱԾ ՄԱՄՈՒԼ

Ազգ · Ազդակ · Արեւ · Զարթօնք · Նոր Աշխարհ · Պայքար · The Armenian Mirror-Spectator · Semanario Armenio SARDARABAD ՍԱՐԴԱՐԱՊԱՏ

Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին ունի իր հաստատ եւ յստակ կանոնադրութիւնը, որուն գործադրութեամբ է որ միայն ան նկատի կ՚առնէ բարեփոխումներ երբ պահանջ զգացուի բարեփոխումներու: Իսկ իշխանութիւնները պէտք է դադրեցնեն կամայական կալանաւորումներու իրենց գործելակերպը, եւ ընդհանրապէս հրապարակաւ ազատ խօսքի եւ գործունէութեան երաշխիք տան եպիսկոպոսական եւ եկեղեցական ժողովներու մասնակցող հոգեւորական թէ աշխարհական անդամներուն, որպէսզի այդ ժողովները կարելի ըլլայ գումարել:

Այսօրուան Հայաստանի մէջ իշխանութեանց կողմէ ստեղծուած եղբայրասպան մթնոլորտը որոշակիօրէն միայն ի նպաստ է մեր հայրենիքի թշնամիներուն:

**ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԴՐՈՒԱԾ ՄԱՄՈՒԼ**
**ԱԶԳ (Հայաստան), ԱԶԴԱԿ (Մոնրէալ), ԱՐԵՒ (Եգիպտոս), ԶԱՐԹՕՆՔ (Լիբանան), ՆՈՐ ԱՇԽԱՐՀ (Յունաստան), ՊԱՅՔԱՐ (Պոսթըն), The Armenian Mirror Spectator (USA), ՍԱՐԴԱՐԱՊԱՏ (Արժանթին)**
**18 Դեկտեմբեր, 2025**

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

# Արցախցիների ստվար մասը Վրթանես սրբազանին իրենց առաջնորդ չեն համարում

Շաբաթներ ի վեր հայ առաքելական եկեղեցու հավատավոր զավակներին՝ Հայաստանում եւ արտերկրում վրդովվեցրեց Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին Երկրորդի հրաժարականը պահանջող 10 եպիսկոպոսների մարտնչող վարքը, իսկ նրանց մեջ Արցախի թեմական առաջնորդ Վրթանես սրբազանի ներկայությունն ամենաանսպասելին եղավ: Նրան հարցեր ուղղելու առիթ չի տրվում շաբաթներ ի վեր, նախընտրում է չշփվել լրագրողների հետ, եւ վերջին երկու շաբաթվա ընթացքում ինձ հանդիպած արցախցիները դժգոհում են, որ իրենց հետ էլ խուսափում է հանդիպել: Մեզ հետ զրուցած արցախցիների մի մասը, որ խիստ քննադատում է Վրթանես սրբազանի՝ Մայր աթոռի, Վեհափառի դեմ ընդվզող վարքը, ցավոք, նախընտրում է անանուն մնալ, բայց կարծիքը հստակ է՝ Արցախի թեմակալ առաջնորդի հրաժարականն են պահանջում: «Ո՞ւմ թեկնածությունն եք առաջադրում» մեր հարցին, հստակ անուններ չեն նշում, քանի որ «շատերին չեն ճանաչում, եւ կարգի համաձայն դա Ամենայն հայոց կաթողիկոսի գործառույթն է», հուշում են: Մեր զրուցակիցներից որեւէ մեկը չնշեց որեւէ պատճառ, պատրվակ, որ իրենց ծանոթ է եւ կռահել կտար, թե ինչն է դրդել Արցախի թեմակալին նման վարքագիծ դրսեւորել: Մեր հարցերն ուղղեցինք 2024 թվականից Արցախի 9 հոգանոց թեմական խորհրդի ատենապետ Լեռնիկ Հովհաննիսյանին:

**-Նախկինում երբեւէ նկատվե՞լ է, որ Վրթանես սրբազանը, առանց խորհրդակցելու կարեւոր որոշում կայացնի: Ո՞րն է ըստ Ձեզ նման քայլի պատճառը:**

- Չեմ կարող ասել: Երբեւէ հարց չի եղել, որ չքննարկեինք եւ եթե մեր լիազորության սահմաններում էր, լուծում չգտնեինք: Այն, ինչ վերաբերում էր թեմական խորհրդին կամ քաղաքական հանդիպումներին, պարզապես տեղյակ էր պահում: Սա անակնկալ էր:





**-Թեմական խորհուրդը դատապարտող հայտարարությամբ հանդես եկավ դեկտեմբերի 3-ին, Վրթանես սրբազանի պարզաբանումից հետո, նկատել տալով, թե նա ներողություն չի խնդրել բռնագաղթյալ ժողովրդից: Հնարավո՞ր է, որ խորհրդի անդամներն առաջիկայում նոր առաջնորդի նշանակման պահանջով դիմեն Վեհափառին: Ինչպե՞ս է լուծվելու թեմի առաջնորդի եւ անդամների միջեւ անհամաձայնությունը, վիրավորանքը:**

-Մեր հայտարարության մեջ իր քայլերի մասին ամեն ինչ ասված է: Արցախցիների արձագանքը Մայր աթոռի, թեմակալ առաջնորդի նկատմամբ խիստ բացասական է: Իհարկե պաշտպանողներ կլինեն, բայց ստվար հատվածը Վրթանես սրբազանին չեն համարում իրենց առաջնորդը: Ինձ հետ շփվողների մեծ մասի կարծիքը դա է: Թե ո՛ր քաղաքական ուղղության են պատկանում, մղվում է հետին պլան:: Ինչպես է հանգուցալուծվելու, չեմ կարող ասել, եկեղեցական ներքին խնդիր է: Անվստահություն կա նրա նկատմամբ, արցախցիները պահանջում են, որ ինքը բացատրություն տա:

**-Ալիեւի ֆաշիզմն ամեն օր ոչնչացնում է Արցախի մշակութային ժառանգությունը՝ միջազգային կառույցների լուռ «խրախուսմամբ»: «Ազգում » անդրադարձել ենք մայիսի 26-28-ին Բեռնում Հայոց ժառանգության վերաբերյալ համաժողովին, որտեղ Գարեգին Բ-ն ուշադրություն սեւռեց հարցին, իսկ նրան ուղեկցում էր Վրթանես սրբազանը: Արցախի մշակութային ժառանգությունը կարելի է փրկել վիրտուալ մի տարածքում՝ լուսանկարների, տեսանյութերի ամփոփմամբ: Միջազգային հարթակներում ավելի ընկալելի կդառնա, թե ինչ արժեք է կործանում Ալիեւը, միգուցե նրա վանդալիզմը կանխվի, արցախցիների վերադարձի թեման ավելի հնչեղ դառնա:**

- Ադրբեջանն անցել է բոլոր կարմիր գծերը, եւ ամեն օր լսում ենք այս կամ այն հուշարձանը վանդալիզմի ենթարկելու, պղծման եւ ոչնչացմանը մասին: Այդ լուրերն անընդհատ ցավ են պատճառում: Մեզ արմատից կտրելը, մեր ինքնության վերացումն էր ուզում Ադրբեջանը: Ցավոք տրքի պետական մակարդակով գրեթե ոչինչ չի արվում հուշարձանները փրկելու նպատակով: Միջազգային հարթակներում Ալիեւի ձեռքը բռնող չկա: Սա է ամենամտահոգիչն այսօր: Ադրբեջանի նպատակը հայոց հետքը ջնջելն է: Միջազգային հարթակներում հայտարարությունները մնում են սոսկ հայտարարություններ, երբ չկա թիկունք: Միջազգային հանրությունը, այդ թվում այն կառույցները, որ կոչված են այդպիսի գոտիներում պահպանել ժառանգությունը, քայլ չեն անում Ադրբեջանի ձեռքը բռնելու, ինչ ուզում, անում է: Արցախի Հանրապետության տարածքում տեղի է ունենում հստակ, պետական մակարդակով կազմակերպված, համակարգված մշակութային էթնոցիդ: Եթե պետական մակարդակով հակազդեցություն չկա, ինչքան էլ հասարակական կազմակերպություններ, ակադեմիական շրջանակներ, նույնիսկ հանրահայտ հետազոտողներ, ուսումնասիրողներ իրենց ձայնը բարձրացնեն, դա կմնա այդ շրջանակներում: Թե՛ գիտական հոդվածներով, թե՛ գրքերի տպագրությամբ հիշողության պահպանումը կարեւոր է, շատ լավ է նաեւ քարոզչության տեսակետից, բայց այսօր այդ քայլերը բավարար չեն:

# Ուժ կունենանք հաղթահարելու...

➪1

***

Առաջիկա 2026-ը Հայաստանում լինելու է ընտրությունների տարի, խորհրդարանական բռնապետությանը (Parlamentarian Dictatorship) վերջ տալու հնարավորության տարի:

Կհաջողվի՞ մեզ հասնել ցանկալի արդյունքի: Դժվար է ասել: Քանզի այդ ընտրություններում, ներկա ընթացքով, արտաքին ուժերը, գլխավորությամբ Բաքվի, Անկարայի եւ Բրյուսելի, ավելի մեծ ձայն, կշիռ ու փող ունեն,- վերջինն արդեն խոստացել է 15 միլիոն եվրո,- քան ընտրող մեր ժողովուրդը: Մանավանդ որ ներսում, ի դեմս Ն. Փաշինյանի կառավարության, նրանք ունեն առայժմ հզոր դաշնակից, բաժնեկից ու մեղսակից: Նրանք ունեն նաեւ հաղթաթուղթ, որով կարող են ճակատագրական երկընտրանքի առջեւ կանգնեցնել մեր ժողովրդային զանգվածներին՝ Նիկոլ կամ Պատերազմ:

Կարո՞ղ ենք ուժ գտնել մեր մեջ հաղթահարելու մեզ սպասող փորձություններն ու փորձանքները:

ՀԱԿՈԲ ԱՎԵՏԻՔՅԱՆ

# Գերմանիայում կալանավորեցին Ադրբեջանի կաշառառու Աքսել Ֆիշերին, որ դատավարությունը չհետաձգվի

Քրիստոնյա-դեմոկրատական կուսակցության՝ Բունդեսթագում մինչեւ 2021 թվականը պատգամավոր Աքսել Ֆիշերը, որ մեղադրվում է 2010-2018-ին ԵԽԽՎ-ում Ադրբեջանից կաշառք ստանալու, դրա դիմաց այդ երկրի օգտին քվեարկելու համար, երկուշաբթի՝ դեկտեմբերի 22-ին կալանավորվել է՝ Կարլսռուհեի հիվանդանոցից: Ինչ Մյունխենի երկրամասային գերագույն դատարանում հունվարից ի վեր քննվում է Ադրբեջանից կաշառառուների գործը, Ֆիշերը, որին ի թիվս այլ հանցանքների ԳԴՀ դատախազությունը մեղադրում է 2016-ին 21.800 եվրո կաշառքի դիմաց Ադրբեջանի շահերը սպասարկելու մեջ, պնդում է, թե «ինքն անմեղ է եւ իր ձայնը չի վաճառել»: Նա բազմիցս, առանց պատճառաբանության չի ներկայացել Մյունխենի դատարան, ինչը ստիպել է դատարանին երկուշաբթի խիստ միջոցի դիմել՝ կալանավորել նրան հիվանդանոցում, տեղափոխել Մյունխեն, այդպիսով շարունակել հետաձգվող դատավարությունը: Ըստ բժշկական փորձագիտական եզրակացության, Աքսել Ֆիշերի առողջական վիճակն արտոնում է մասնակցել դատական նիստերին: Դեկտեմբերի 22-ին դատավարությունը վերսկսվել է կեսօրից հետո: Դատարանը մերժել է Ֆիշերի պաշտպանների ներկայացրած ապացույցների վերաբերյալ բազմաթիվ միջնորդությունները, որոնց նպատակը դատավարությունը մինչև նոր տարի ձգձգել է :Ինչպես ծանուցել ենք «Ազգի» հոկտեմբերի 10-ի համարում նկատելի է Ֆիշերի պաշտպանական կողմի՝ դատավարությունն անընդհատ ձգձգելու մարտավարությունը, որի նպատակը վաղեմության ժամկետի ավարտն է: Նախորդ շաբաթ Գերմանահայ իրավաբանների միությունը «Ադրբեջանի խավիարային գործի» վերաբերյալ վաղեմության ժամկետի մասին իրավական կարծիք էր ուղարկել ԳԴՀ արդարադատության նախարարին, Բունդեսթագի ՔԴՄ -ՔՍՄ, ՍԴԿ, Կանաչների եւ Ձախերի խմբակցություններին, որով առաջարկ էր ներկայացրել վաղեմության ժամկետի պահանջների հնարավոր բարեփոխման վերաբերյալ: Գերմանահայ իրավաբանների միությունը Transparency International-ի հետ պահանջում է «քաղաքական և իրավական հաշվեհարդարը չխաթարել վաղեմության ժամկետով՝ նման զարգացումը օրենքի գերակայության համար հետընթաց» նկատելով:



*Լուսանկարը՝ Մաթթիաս Բալկի, dpa*

Ֆիշերի ձերբակալման որոշումն ուժի մեջ է, հաջորդ դատական նիստը նշանակված է 2026 թվականի հունվարի 9-ին:: Մեղադրանքի վաղեմության ժամկետը լրանում է հունվարին: Եթե դատավարությունը հետաձգվի դրանից հետո, Ֆիշերն այլեւս չի կարող դատապարտվել: Մյունխենի դատախազությունը վստահ է, թե դատավարությունը կարող է ավարտվել վաղեմության ժամկետը լրանալուց առաջ:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԱՐԾՎԻ ԲԱԽՉԻՆՅԱՆ

# Նեսիմ Օվադյա Իզրաիլ. Հայամետ հրեան Թուրքիայից

*ԵՐԵՎԱՆ-ՍՏԱՄԲՈՒԼ - Նեսիմ Օվադյա Իզրաիլը Թուրքիայում ապրող հրեա պատմաբան, գրող եւ թատերագետ է: Ծնվել է 1952-ին, Երուսաղեմում, մեկ տարեկանում ընտանիքի հետ վերադարձել է Ստամբուլ: 1973 թվականին ավարտել է Ստամբուլի Տեխնիկական համալսարանը՝ ստանալով քաղաքաշինության դիպլոմ, ապա հետբուհական ուսումնառություն է անցել նույն հաստատությունում: Քաղաքաշինության ոլորտում աշխատել է մինչեւ 2008 թվականը, իսկ թոշակի անցնելուց հետո ամբողջությամբ նվիրվել է օսմանյան եւ արդի թուրքական պատմության ուսումնասիրությանը: Իզրաիլը հեղինակ է թուրքերեն արժեքավոր գրքերի Օսմանյան կայսրությունում հայերի փորձառության եւ հատկապես թատրոնի պատմության վերաբերյալ:*



**-Հարգելի՛ Նեսիմ, որպես Թուրքիայի հրեական համայնքի ներկայացուցիչ, կարո՞ղ եք պատմել, թե ինչպիսին է այսօր այդ համայնքի վիճակը եւ ինչպես է նա պահպանում իր ազգային ինքնությունը:**

-Այսօր Թուրքիայում ապրող հրեաները շառավիղներն են սեֆարդյան հրեաների այն համայնքի, որը երբեմնի մուսուլմանական իշխանության օրոք բնակվել է Պիրենեյան թերակղզում՝ Իսպանիայում եւ Պորտուգալիայում, նաեւ հարավային կաթոլիկ Ֆրանսիայում, արտոնյալ պայմաններում: Երբ տեղական կաթոլիկներն ի վերջո ուժեղացել են, մուսուլման իշխանները հարկադրված են եղել հեռանալ տարածաշրջանից: Նրանց հետ համագործակցող հրեաները դարձել են նոր կաթոլիկ վարչակազմի թիրախ. շատերը սպանվել են կամ խստորեն պատժվել, ուրիշների թույլատրել են լքել երկիրը:

Այդ ժամանակ Եվրոպայի ամենագործունյա եւ ամենահզոր պետության ղեկավարը՝ օսմանյան սուլթանը, ընդունել է վտարված հրեաներին: Մոտավորապես 1492-ին նրանց բերել են որպես արհեստավոր եւ մասնագիտական մի ուժ, որն անհրաժեշտ էր Օսմանյան կայսրությանը: Հրեաները բնակություն են հաստատել հիմնականում Կոստանդնուպոլսում՝ կայսերական մայրաքաղաքում, ինչպես նաեւ Սելանիկում, Իզմիրում, Բուրսայում, Էդիրնեում եւ այլ քաղաքներում: 530 տարի է, ինչ նրանք պահպանում են իրենց գոյությունն այս աշխարհագրական միջավայրում, որն ընդգծված կերպով ձեւավորվել է իսլամական կրոնականությամբ: Խոսելով լադինոյով՝ հին հայրենիքից բերված իսպաներենի եւ նոր վայրում ձեւավորված թուրքական, եվրոպական ու արաբական ազդեցությունների խառնուրդով, նրանք իրենց լեզուն հասցրել են մինչեւ մեր օրերը:

**-Այո՛, երբ մի անգամ Ստամբուլում ծանոթացա Սառա անունով մի աղջկա հետ, հարցրի, թե նա հրեա՞ է եւ գիտի՞ արդյոք եբրայերեն: Զարմացա, երբ պատասխանեց, որ ինքը չի խոսում, սակայն մեծ ծնողները խոսել են իսպաներեն...**

-Այո՛, լադինոն շատերն իսպաներեն են անվանում... Օսմանյան կայսրությունը գոյատեւել է որպես բազմալեզու ու բազմամշակույթ կառույց, որը չի միջամտել հրեաների եւ մյուս ոչ մուսուլման համայնքների կրոնական կյանքին (թեեւ որոշակի դեպքերում միջամտություններ, իհարկե, եղել են): Օսմանյան հրեաները պահպանել են իրենց ներկայությունը նաեւ իրենց հանդարտ եւ հանդուրժող հանրային վարքի շնորհիվ:

Թուրքական հանրապետության վաղ տարիներին՝ 20-րդ դարում ձեւավորված ազգ-պետության շրջանում, Թուրքիայի հրեաները բախվեցին ձուլման ճնշումների, որոնցից էր նաեւ իրենց մայրենի լադինոյով խոսելու արգելքը: Նրանք կարողացան գոյատեւել «Կայադես» (լադինոյով՝ լռություն) անվանվող քաղաքականությամբ, որը փոխզիջման գլխավոր նշանն էր: Թեեւ կան անհատական տարբերություններ, կարծում եմ՝ այսօր էլ նրանք մեծապես պահպանում են այդ դիրքորոշումը: Մանավանդ երբ Իսրայելի եւ Թուրքիայի հարաբերություններում սկսում են «ցուրտ քամիներ» փչել, հրեական համայնքում լռությանը հակվածությունը նկատելիորեն ուժեղանում է:

Այսօր ի հայտ է եկել նաեւ հակառակ միտում՝ «Ավլարեմոս» («Եկեք խոսենք»):

**-Դուք խոսում եք մի քանի լեզվով, որոշ չափով՝ նաեւ հայերեն: Ինչպե՞ս առաջացավ ձեր հետաքրքրությունը հայոց լեզվի եւ մշակույթի նկատմամբ:**

-Թեեւ ես աշխարհայացքով ձախակողմյան եմ, սոցիալիստ ու թեեւ կրթությամբ ու մասնագիտությամբ ճարտարագետ եմ, իմ իրական հետաքրքրությունը միշտ եղել է Օսմանյան կայսրության վերջին դարի եւ Թուրքիայի Հանրապետության հիմնադրման տարիների պատմությունը: Երիտասարդությունս անցել է այդ թեմաների ընթերցանությամբ եւ ուսումնասիրությամբ:

Այդ տարիներին, ինչպես շատերը, ես էլ գրեթե ոչինչ չգիտեի 1915 թվականին հայերի տեղահանումների մասին: Անկեղծ ասած՝ լիովին չէի հասկանում 1970-ականներից մինչեւ 1990-ականները թուրք դիվանագետների դեմ իրականացված հարձակումների դրդապատճառները, որոնք հանգեցրել են մահերի:

Վերջապես, 1995 թվականին, երբ կարդացի **Վահագն Տատրյանի** «Ցեղասպանություն. 1915 թվականի հայկական հարցը եւ դրա իրավական հետեւանքները» գիրքը, չափազանց տպավորվեցի: Սկսեցի ավելի շատ գրքեր ընթերցել այդ թեմայով: Ստամբուլի «Ակօս» թերթն էլ կարեւոր դեր ունեցավ իմ լուսավորման մեջ:

2007 թվականին Ստամբուլի մարդաշատ փողոցում Հրանտ Դինքի սպանությունն, ինչպես բոլորին, ինձ եւս հասկացրեց, որ այս հարցը հեռու է լուծված լինելուց եւ շարունակում է ակտիվորեն քննարկվել: Եվ սկսեցի ինքս էլ ուսումնասիրել, սովորել ու գրել: Եվ դեռ շարունակում եմ:

**-Քաջ հայտնի է, որ հայերն են եղել թուրքական թատրոնի հիմնադիրը, այս թեմայով կան թե՛ հայերեն, թե՛ թուրքերեն գրքեր: Իմ հոր՝ Հենրիկ Բախչինյանի եւ ինձ համար հաճելի անակնկալ էր իմանալ, որ մեր աշխատասիրած խմբագիր եւ դերասան Երվանդ Թոլայանի «Կավռոշնամե» ինքնակենսագրություն-հուշերը, թարգմանաբար լույս է տեսել թուրքերեն՝ ձեր խմբագրությամբ: Ինչպե՞ս կգնահատեք այդ գրքի նշանակությունը:**

-Արդեն 15 տարի է, ինչ ուսումնասիրում եմ հայերի՝ որպես Օսմանյան կայսրության թատրոնի հիմնադիրների պատմությունը: Երբ հասկացա, թե որքա՜ն կարեւոր է մայր աղբյուրներին հասնելու համար հայերեն իմանալը, սկսեցի սովորել լեզուն: Չնայած խոսելու մեծ փորձ չունեմ, զգալի առաջընթաց եմ արձանագրել կարդալու եւ թարգմանության մեջ:

Երբ «Արաս» հրատարակչությունը 2019-ին հրատարակեց Թոլայանի հուշերը՝ հայերեն, դրանք մեծապես օգտակար եղան իմ այն ժամանակ գրվող ուսումնասիրության՝ «Մարտիրոս Մնակյանը Թանզիմաթի, Աբդուլ Համիդի (Իսթիբդաթ) եւ Սահմանադրական (Մեշրութիեթ) շրջանի թատրոնում» գրքի համար: Թոլայանի գրքի գրեթե կեսը թարգմանելուց հետո հասկացա, թե ի՜նչ կարեւոր գործ է դա: Եվ երբ «Արասի» հրատարակիչ, երջանկահիշատակ **Եդուարդ Թովմասյանը** հետագայում առաջարկեց ինձ լինել թուրքերեն հրատարակության խմբագիրը, մեծ հաճույքով համաձայնեցի:

«Կավռոշ-նամեն» սովորական հուշագրություն չէ: Թեև նրա որոշ հատվածներ կարելի է գտնել այլ աղբյուրներում, Թոլայանը հայ թատրոնի պատմությունը ներկայացրել է մի այնպիսի տեսանկյունից, որը մինչ այդ հազվադեպ էր հանդիպում: Այդպիսով, ստեղծվել է մի պատում, որն ամբողջովին դուրս է ուշ օսմանյան տարիների հայ քաղաքական կուսակցությունների դիտանկյունից: Հայ թատրոնի պատմությունն այդ տեսանկյունից ընթերցելը տալիս էր մի նոր, թարմ հեռանկար: Հայ թատրոնի վերաբերյալ սկզբնաղբյուրներն ունեն շատ սահմանափակ քաղաքական վերլուծություն: Սակայն Թոլայանը, պատմելով հայ թատրոնի պատմությունը, բացեիբաց ներկայացնում է իր քաղաքական դիրքորոշումը: Հավանաբար մեծ դեր է խաղացել այն հանգամանքը, որ նա իր հուշերը գրել է Թուրքիայի սահմաններից դուրս, նախ՝ Փարիզում, ապա՝ Երեւանում:

Այս աշխատության շնորհիվ ես ավելի լավ հասկացա, թե ինչու **Մարտիրոս Մնակյանը**, **Հակոբ Վարդովյանը** եւ հայ թատրոնի շատ այլ գործիչներ չեն ցանկացել հրապարակայնորեն հանդես գալ քաղաքական դիրքորոշումներով՝ նախընտրելով փոխզիջման գնալ Օսմանյան պետության եւ թուրքերի հետ՝ շարունակելու համար իրենց բեմական գործունեությունը:

**-Դուք նաեւ հրապարակել եք հետազոտություններ թատերական գործիչներ Աշոտ Մադաթյանի եւ Շահինյան ընտանիքի մասին: Ի՞նչն է այս դեմքերին առանձնահատուկ դարձնում թուրքական թատրոնի պատմության մեջ:**

-Օսմանյան թատրոնի հիմնադրումից հետո առաջին 60 տարիներին այն ամբողջությամբ եղել է հայկական, այն ամբողջովին ղեկավարել են հայ արվեստագետները: Թուրք դերասաններն այդ դիրքերին կարողացան հասնել միայն ավելի ուշ: Եվ երբ հիմնվեց Թուրքիայի Հանրապետությունը, թատրոնն արդեն կայացած էր հենց հայ արվեստագետների շնորհիվ:

Սակայն ինչպես Ջումհուրիեթը գրեթե չընդունեց օսմանյան ժառանգությունը, այնպես էլ համարյա ջնջեց հայ թատերական գործիչների ժառանգությունը: Բացի մի քանի թուրքալեզու թատերագետներից, հանրապետական շրջանի մեծ մասն արհամարհեց հայերի ներդրումը: Բայց գոյություն ունի հանրապետական շրջանին նախորդող հսկայական թատերական պատմություն: Այսօր էլ քչաթիվ թատերական պատմաբանները փորձում են այս ճշմարտությունը փոխանցել նոր սերունդներին:

Առաջընթաց կա՞: Այո՛, կա՛: Ես, որպես այդ պատմաբաններից մեկը, փորձում եմ վերականգնել Թուրքիայի թատերական պատմության բաց թողած օղակները: Իմ գրքերը՝ նվիրված Մարտիրոս Մնակյանին, Աշոտ Մադաթյանին եւ Շահինյան ընտանիքին, պարզապես կենսագրականներ չեն. դրանք այնպիսի աշխատություններ են, որոնք ներկայացնում են ինչպես Օսմանյան կայսրության, այնպես էլ Թուրքիայի հանրապետության թատրոնի պատմությունը:

**-Բացի թատերական ուսումնասիրություններից, դուք անդրադարձել եք նաեւ եղեռնամահ հայ գրողներին՝ ձեր «1915 ապրիլի 24. Ստամբուլ, Չանղըրը, Այաշ, Անկարա» եւ Գրիգոր Զոհրապին նվիրված հատորներում: Ի՞նչ ընդունելություն են ունեցել այդ գրքերը թուրք գիտնականների եւ ընթերցողների շրջանում: Որեւէ սպառնալիքի հանդիպե՞լ եք:**

-«1915. Մահվան ուղի. Գրիգոր Զոհրապ» գիրքն իմ առաջին հրատարակված աշխատանքն է: Այդ հատորի շնորհիվ **Գրիգոր Զոհրապը** լայնորեն ճանաչվեց ու սիրվեց Թուրքիայում: Ինչպես հայտնի է, նա չի եղել 1915-ին Ստամբուլում ձերբակալված 250 հայ մտավորականների մեջ, բայց շատերը սխալմամբ կարծում են, թե եղել է:

Զոհրապն այն անձնավորությունն է, որի մասին գրածս գիրքն ամենաթանկն է ինձ համար, որով ամենաշատն եմ հպարտանում: Նա մի անձնավորություն էր, որի բնավորությունը խորապես գնահատում եմ եւ որին կցանկանայի նմանվել:

Իմ «1915 ապրիլի 24. Ստամբուլ, Չանղըրը, Այաշ, Անկարա» գիրքը նույնպես շատ կարեւոր է. այն ներկայացնում է Օսմանյան կայսրության հայկական տեղահանումները փաստաթղթերով՝ մատչելի ձեւաչափով: 2013-ին, երբ այն հրատարակվեց, Թուրքիայում մթնոլորտն ավելի հանդուրժող էր: Մոտենալով 1915-ի հարյուրամյակին՝ թե՛ հասարակության մեջ, թե՛ իշխանական շրջանակներում ավելի բաց վերաբերմունք կար: Գիրքը, երկու անգամ տպագրվելով, այսօր սպառված է:

⇨6

# Հայաստանի նկարիչների միությունում տարին ամփոփվեց «Սալոն 2025»-ով

ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Հայաստանի նկարիչների միության ցուցասրահներում բացված «Սալոն 2025»-ի մասնակիցները ՀՆՄ անդամներն էին: Ցուցադրված գործերը եւ՛ թեմատիկ առումով, եւ՛ նկարելաոճով տարբեր էին, սակայն, համոզված եմ, հայ կերպարվեստի ամբողջական գուներանգն ու իմաստը, բովանդակային խորքը շատ ավելի մեծ են, քան այս ցուցահանդեսում ներկայացվածի պարունակությունը: Այդուհանդերձ, ցուցահանդեսում մի պտույտն էլ բավական էր՝ առաջնային տպավորություն ունենալու. հոգեվիճակների ներկայացման «այլախոհությամբ» արված գունա-պատկերային հորինվածքներ, իրականության եւ զգացմունքների երեւակայական ծավալումներ, իրապաշտական մանրամասնումներից մինչեւ հոգեւոր ընթերցումներ, նուրբ բնապատկերներից մինչեւ ձեւապատկերների միջոցով գեղանկարչական նոր փնտրումներ: Ինքս ամենում փնտրում էի բովանդակային իմաստով լեցուն-խորքային, ներկայիս իրականությունը, թեկուզ, խորհրդանշորեն պատկերող գործեր, եւ այդպիսիք ես գտա:

Հոգեւոր թեմաների ուղղակի արծարծումը բնորոշ է գեղանկարիչ **Լորիկ Մինասյանի**՝ հատկապես վերջին տարիների ստեղծագործությանը: Նա ունի տպավորիչ բնանկարներ, իր ծննդավայր Սյունաց աշխարհի պատկերներ, վանքանկարներ, տպավորիչ նատյուրմորտներ, իսկ հոգեւոր թեմաների հաճախակի հոլովույթը նրա կտավներին գալիս է իր ապրած անձնական ողբերգությունից, կորստից եւ երկնային կենանար ներկայության փնտրումից. նրա նպատակը միայն գեղանկարչական լուծումների փնտրումը չէ, այլ դրանց ամոքիչ ուժը, որ զգում է ինքը՝ այդ կտավները ստեղծելիս, այն բուժիչ ազդեցությունը, որ այդ կտավները կարող են ունենալ դիտողի համար: «Սալոն 2025»-ում նրա «Խորհուրդ խորոց» խորագրված վանքանկարին թափանցիկ դեղնա-նարնջով եւ լուրթ կապտավուն օրվա մեջ լողացող տաճարն է եւ նույն գույներով ձուկը՝ քրիստոնեության գաղտնի նշանը: Իր նկարչության մեջ Լորիկ Մինասյանը խոսում է գաղտնագրության լեզվով՝ խորհրդանիշների միջոցով, ասես, բարձրաձայնելով օրվա լուռ ճիչը, իսկ երանգախաղի ընտրությունը լուսավոր հայացքն է, որ չպետք է կորցնել, նույնիսկ, ամենամութ գիշերվան...

Սալոնի լավագույն ստեղծագործությունների շարքում կդասեի **Տիգրան Արամի Սարգսյանի** «Կեչիներ» կտավը: Շուրջ տասը տարի հետեւելով Տիգրանի ստեղծագործական աճին՝ արձանագրում եմ, որ այս երիտասարդն այժմ հասուն արվեստագետ է՝ գույնի նուրբ զգացողությամբ, թեմաների ընդգծված քնարականությամբ, տեխնիկական միջոցների գործածման վարպետությամբ: «Կեչիներ»-ն ինքնըստինքյան քնարական բանաստեղծություն է՝ ծառերի բարակ բների թափանցիկության հասնող «մաշկով», վայր թափվող հարուստ գեսեր հիշեցնող սաղարթների նուրբ վարդագույնին խառն շիկավուն դեղինով: Նկարչի հոգեւոր կրթությունը (ուսանել է Էջմիածնի Գեւորգյան ճեմարանում, ձեռնադրվել քահանա՝ անվանակոչվելով Տեր Նարեկ) սովորեցրել է առավել խորքայնորեն քննելու իրերն ու երեւույթները, լինելու հաշտ ու ներդաշնակ բնությանը, իր խոհածությունը կտավին հանձնելու խաղաղարար բնանկարներով, նատյուրմորտներով: Աստծուն, բնությանը ներդաշնակվելու, համաչափվելու ներքին ձգտումը նման արդյունք է տալիս, եւ այս ընթացքը ներքին մղման արդյունք է՝ բնական, անկեղծ, գեղարվեստորեն: Նա իր հոր՝ գեղանկարիչ **Արամ Ապարանցի Սարգսյանի** լավագույն աշակերտն է, եւ նույն սրահում՝ դեմհանդիման ցուցադրված էին երկուսի վրձնած կտավները: Վերջինիս «Վերիվանք» բնանկարն աշնանային ռապսոդիա է՝ լերկ լեռների փեշերին ցանցառ խոտութփերի խճճանքում առանձնյակ ծառերով՝ վառ ու խամրած դեղինով, ճերմակ փնջանքներով, ճյուղերի կարմիր-դարչնավուն «գլխանոցներով»: Իսկ դեպի հեռուն ձգվող ժայռերն ալիք-ալիք ձգվում են դեպի երկնքի կապույտը, եւ դրանց մեղմ դարչնագույն մերկությունը բնավ խիստ չէ, այլ մի տեսակ հուշում է նրանց փափուկ բնույթի, անդորրության մասին:

Տավուշյան բնության նվիրյալ «երգիչն» է **Ավետիք Հարությունյանը**, որն ապրում եւ ստեղծագործում է Դիլիջանում: Իր ծննդավայրի մառախլապատ բնանկարները, նատյուրմորտները թախծալույսով են պարուրված, նա սիրում, հիանում է հայրենի վայրերի գեղեցկությամբ, գտնում եւ պատկերում է թաքուն անկյուններ, եւ իր վրձնած պատկերները սիրել է տալիս ակնդրին:



Արմենակ Վարդանյանց. Ծառը



Դավիթ Դավթյան. Իմ մոլորակը



Իրինա Սաղյան. Ծաղկազարդ

Թախծոտ-երազային են **Նաիրա Աիարոնյանի** մաշիտով եւ սեւ, չխամրող տուշով ուրվագծված գրաֆիկական թերթերը, որ կնոջ կերպարի հեղինակային բացահայտումներն են, ըստ էության նկարչուհու հոգեվիճակների արձանագրումները, բոլորը՝ նուրբ, եթերային, իրականությունից վերացած, անաղարտ, թափանցիկ: Սալոնում ցուցադրվում էր այս շարքի «Բեթհովեն 4» վերնագրված գործը, որ ոչ միայն երաժշտության ունկնդրումից նկարչուհու զգացողությունների պատկերային արտահայտությունն էր, այլ նաեւ սիրո, երջանկության հավերժական թեմայի շուրջ իր ոգորումը: Թղթի վրա կնոջ կերպարի նրա արծարծումները քնարական բանաստեղծություններ են, որ հնարում է նկարչուհին, որը կյանքում համեստ է, անցուցանք, հոգու խորքում՝ անուրջներ:

**Դավիթ Դավթյանի** «Իմ մոլորակը» կտավում կնոջ չկոնկրետացված կերպարը՝ իր մերկության երանգագծումների անցումներով, եթերում լողացող դիրքով, իրապաշտությունից տարանջատ աներջայնությամբ, կտավի մակերեսի գունակառուցվածքով՝ կնոջ էության բացահայտման գեղարվեստական բանաձեւումներից մեկն է:

Ուռենու դալար ճյուղերն, ասես, չեն տեղավորվում կտավի շրջանակում, ներս են խուժում դահլիճ՝ գարնանային սառն, հաճելի շունչ բերելով: Այդ կենդանի շունչն ու թարմությունը հաղորդել է **Իրինա Սաղյանն** իր «Ծաղկազարդ» կտավով: Ցուցահանդեսից ինձ հետ տուն բերած լավագույն զգացողությունները կապված են մի քանի կտավների ու քանդակների հետ, եւ դրանցից մեկը հենց այս կտավն է: Կնոջական ձեռագիրն ակնհայտ է՝ նրբազգաց, գեղահյուս: Ուռենիների տերեւազուրկ ճյուղերին աչք տված հատիկ-հատիկ «պտղունքը» կտավին ջերմություն են հաղորդում, ճյուղերի բնական հյուսքը՝ հուռութք, եւ դրանց արանքից հեռվում նշմարվում է վանքը: Հողին դեռեւս չհալչած սառույցն է՝ ճերմակ կղզյակներով: Զարթոնքի, սիրո սպասում է, բնության կախարդանք, նոր կենդանության սկիզբ, հավատի հաղթանակ...

Մի ուրիշ դեղին է գերակշռում **Սուսան Ավանեսյանի** «Աշուն» բնանկարում՝ բլրալանջերի համատարած նարնջագույն այրմամբ, ցածր ծառերի մուգ կանաչի, դարչնագույնի ֆոնին առավել ընդգծուն վաղ արեւագույնի բազում երանգավորմամբ բուսականությամբ: Դեղինը «հոսել է» հողին եւ թափվում է առատաջուր վտակի կապտաճերմակ ալյաց մեջ: Ջրերի ընթացքն արագացել է քամուց, ծառերն, ասես, հետ է՝ վտակի հունով կընթանան՝ քամու ուժեղ պոռթկումից դրդված. անդրդվելի-անշարժ են միայն ջրերի մեջ՝ ցից-ցից քարերը: Իսկ վերում՝ լուրթ երկինքն է՝ մեջը՝ ճերմակ ամպերը՝ ծխիկ-ծխիկ:

Աշնանային մոտիվով բնանկար-գյուղանկար է **Արմինե Մելիք-Իսրայելյանի** յուղաներկ աշխատանքը՝ միջօրեի անդորրությամբ, գյուղական բակի՝ հայկական գորգի երանգային անցումներով հողե տարածքով, բակի մեջտեղում՝ կարպետը, կարպետին նստած կինը՝ աղորիքը պտտելիս, տնամերձ այգու աշնանային գունաբաշխումը, գյուղական տնից դենը՝ դեպի հորիզոնի անսահմանություն ձգվող լեռների բաց-թանաքը՝ իդիլիա, որ, թվում է՝ անխախտ է՝ հայկականության կնիքով, բնության եւ մարդու ներդաշնությամբ: Ըղձալի է այս հասարակ կենցաղն ու հանդարտությունը հեղինակի համար, եւ այդ մասին նա սիրով է պատմում:

Այս ցուցահանդեսին **Արմեն Լոռենց Հարությունյանը** ներկայացել էր իր առավել վաղ շրջանի ստեղծագործությամբ: Ընտրությունը պատահական չէր. «Հին Շուշի» կտավը հիմա դիտվում է մի առանձին կարոտով, ափսոսանքով, անսփոփելի ցավի զգացմամբ: Ցավոք, կտավին հանձնված մեր շատ արժեքներ կորսված են, եւ նման գեղանկարչական արձանագրումները ոչ միայն գեղարվեստական, այլ նաեւ պատմական-վավերագրական նշանակություն ունեն: Իսկ կտավին հողե ճանապարհի եզրին շարված մի քանի տներ են՝ հայկական ավանդական ճարտարապետությամբ. ամեն մեկը, կարծես, մի ամրոց լինի, վերնամասում կիսաշրջանաձեւ, տաճարներում լույս ներթափանցող բացվածքների նմանությամբ պատուհաններով, ամուր, քարե պարիսպ-պատերով, հին, դարչնագույն-փայտե, երկդռնանի ծանր ու մեծ դարպասներով, արեւային լույսի ճերմակը՝ շինությունների ճակատներին, բակերի բարձր ծառերի կատարների նշմարումներով: Արեւային լույսը, հավանաբար, ներս է խուժել բարձր պատուհաններից ներս, ամրոցների սենյակների անկյուններում ճյուղավորվելով ու ստվերախաղով: Եվ կարոտախտը հաղթելու միջոցն այդ արեւալույսը դիտելն ու պատկերացնելն է:

«Սալոն 2025»-ի ամենաազդեցիկ գործերից մեկի հեղինակն էլ **Սերգեյ Նարազյանն** էր: Մարդն ուսել էր պատերազմի, թալանի աղետներից փլուզված իր տան կիսականգուն պատերը եւ ուժերի ծայրահեղ լարմամբ ուզում էր քաշել, տեղից պոկել, տեղափոխել դրանք: Դիտելիս հիշեցի սերբ բանաստեղծուհի Լյուբիցա Միլետիչի տողերը. հայրենազրկությունը պատկերավոր տալով՝ նա գրել էր, թե ոնց է մարդն իր տան տանիքը գիրկն առած հեռանում իր հայրենի վայրերից:

Գայթակղությունը մեծ է ներկայացնելու ավելի շատ գործեր, բայց մի հոդվածի շրջանակներում երկու հարյուր նկարիչների մասին խոսելն անհնար է: Միայն հավելեմ, որ քանդակը թեեւ առավել սակավ քանակով, բայց բավական մեծ որակով էր ներկայացված այստեղ: Դրանցից էր մեր վարպետներից մեկի՝ **Արմենակ Վարդանյանի** «Ծառը». մարդու վեր բարձրացրած ձեռքերը ճյուղերի են վերածվում, եւ այդ գործը մարդ էակի հողեղենության, միատեղ՝ ոգեղենության մասին է, նաեւ մեր՝ սեփական հողում անպոկելի արմատներ ունենալու եւ սաղարթավորվելու մասին:

ՀՐԱՉՅԱ ԲԱԼՈՅԱՆ
(Արմենյան)

Բան. գիտ. թեկնածու
«Պատմաբանասիրական հանդես»-ի
հայերեն բաժնի խմբագիր

# Հաղթանակ արվեստի գերտերություններից մեկում

Տարույս նոյեմբերի 30-ին ավարտվեց համաշխարհային արվեստային կենտրոններից մեկի՝ Փարիզի «Ժորժ Պոմպիդու» արվեստի եւ մշակույթի ազգային կենտրոնի նախաձեռնությամբ կինոռեժիսոր, վավերագրող **Հարություն Խաչատրյանի** ֆիլմերի՝ հոկտեմբերի 9-ից մեկնարկած հետահայաց ցուցադրության ծրագիրը, որն իրականացվել է «La Cinémathéque du documentaire par la Bpi» ծրագրի շրջանակում՝ «Բացելով ներկայի ծալքերը» խորագրի ներքո:



Շուրջ 2 ամիս Փարիզի «Mk2 Bibliothéque cinema»-ում 30 ցուցադրությամբ համաշխարհային կինոհանդիսատեսին ներկայացվեցին հայ կինոգործչի 10 ֆիլմերը՝ «Կոնդ», «Սպիտակ քաղաք», «Վերադարձ ավետյաց երկիր», «Վերջին կայարանը», «Վավերագրողը», «Պոետի վերադարձը», «Սահման», «Անվերջ փախուստ, հավերժ վերադարձ», «Փակուղի», «Նկարչի երեք գերեզմանները». աննախադեպ երեւույթ թե՛ հայ կինոյի, թե՛ «Պոմպիդու» կենտրոնի հետահայացների պատմության մեջ: Նշենք, որ Հարություն Խաչատրյանից խնդրել էին 3 ֆիլմ, բայց ընտրել էին վերոհիշյալ բոլոր 10 ֆիլմերը:

Ցուցադրությունների օրերին հիշյալ կենտրոնում կայացել են նաեւ արվեստագետի վարպետաց դասերն ու հանդիպումները կինոհանդիսատեսի հետ՝ Q&A՝ հարց ու պատասխան ձեւաչափով: Մի երիտասարդ ֆրանսուհի որոշել է իր դիպլոմայինը նվիրել խաչատրյանական կինոյին:

Հարություն Խաչատրյանի ֆիլմերը համաշխարհային կինոհանդիսատեսին ներկայացրել են Ֆրանսիայում ապրող եւ ստեղծագործող հայ կինոռեժիսորներ, ինչը եւս մեկ առիթ էր հայկական կինոժառանգությունը հանրայնացնելու:

«Ժորժ Պոմպիդու» արվեստի եւ մշակույթի ազգային կենտրոնը եւ «Mk2 Bibliothéque cinema»-ն պաշտոնական կինոքննադատական տեքստով անդրադարձել են հայ արվեստագետի կինոժառանգությանը, կենտրոնը ծավալուն հարցազրույց է նկարահանել կինոռեժիսորի հետ, համաշխարհային հեղինակավոր կինոմեդիայի կարեւորագույն պարբերականներից մեկը՝ «Cahiers du Cinema» (Կայիե դյու սինեմա) ամսագիրը, որի միայն ֆեյսբուքյան պաշտոնական էջն ունի 229.000 հետեւորդ, հետաքրքրական վերլուծությամբ անդրադարձել է Հարություն Խաչատրյանի կինոյին եւ ֆիլմերի հետահայացին:




Վավերագրական կինոյի ֆրանսիական եւ միջազգային մի շարք հեղինակավոր ընկերությունների կողմից՝ La SCAM-ը (Մուլտիմեդիա հեղինակների քաղաքացիական հասարակություն-ՄՀՔՀ), La SCAM-Canada-ն, (ՄՀՔՀ-Կանադա), La SCAM-Belgique-ը (ՄՀՔՀ-Բելգիա), Cinémathéque du Documentaire-ը (Վավերագրողների սինեմատեք), Cineteca Nacional de Chile-ն (Չիլիի ազգային սինետեկա), Société Suisse des Auteurs-ը (Հեղինակների շվեյցարական ասոցիացիա), Heritage of la Cinémathéque Suisse (Շվեյցարական Սինեմատեքի ժառանգություն) եւ այլն, Հայաստանին առաջարկվել է «1001 վավերագրական ֆիլմերի հավաքածու» նախագծում, որը ներառում է 1920-2020 թվականներին ՅՈՒՆԵՍԿՕ-ի 194 անդամ պետություններում ստեղծված ավելի քան 150 ազգությունների վավերագրական ֆիլմեր եւ ավելի քան 350 ֆիլմեր, որոնք նկարահանվել են կանանց կողմից, ընդգրկել նաեւ Հարություն Խաչատրյանի «Վերադարձ ավետյաց երկիր» ֆիլմը:

Նպատակ կա հիշյալ նախագիծը ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Համաշխարհային հիշողության ռեգիստրում» ընդգրկելու: Եթե դա իրականանա, ապա Հարություն Խաչատրյանի՝ հազարավոր ֆիլմերից ընտրված այս կինոաշխատանքը կհարեւանի համաշխարհային կինոարվեստի այնպիսի երեւելի նմուշներին, ինչպիսիք են Լյումիեր եղբայրների ֆիլմերը, Ֆրից Լանգի «Մետրոպոլիսը» կամ Կլոդ Լանցմանի «Շոան», որոնք արդեն գրանցված են ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Համաշխարհային հիշողության ռեգիստրում»: Այս հաստատումից հետո նշված ֆիլմը կստանա ՅՈՒՆԵՍԿՕ-ի հետ կապված խորհրդանշական բովանդակություն եւ կկարողանա օգտագործել «Աշխարհի հիշողություն» պատկերանշանը:

Ուրախանանք մեր ազգակիցների հաջողություններով ու հաղթանակներով, կամենանք, մաղթենք նրանց նորանոր հաջողություններ ու հաղթանակներ, մերովսանն նպաստենք այդ հաջողությունների ու հաղթանակների իրականացմանը՝ գոնե գնահատանքով ու բարի խոսքով, եթե առարկայապես ու նյութապես չենք կարող, իհարկե, հնարավորության դեպքում, թե՛ մեկով, թե՛ մյուսով:

*Նկարները՝ «Kinoashkharh» կայքից*

## Սպասված օրացույց՝ «Գյումրի եւ անդին»-2026

Անգամ մի օրացույցի հասարակ շնորհանդեսը կարող է լինել իսկապես հիշարժան, երբ այդ օրացույցը մշակութային արժեք է ներկայացնում եւ միջոցառումը հյուրընկալող օջախում էլ նման բաներն անցկացվում են համակող ու հարստացնող մշակութային մթնոլորտում: Ճիշտ այդպիսին էր գեղագետ-արվեստաբան, ԵՊՀ դոցենտ **Լեւոն Լաճիկյանի** գծանկարներով կազմված «Գյումրի եւ անդին» 2026 թվականի 12 էջանոց, եռալեզու օրացույց-տեղեկատուի շնորհանդես-գինեցողումը Գյումրիում, անցած ուրբաթ:

Արդեն չորրորդ տարին քաղաքին նվիրվող եւ ոչ միայն այստեղ սպասված լինել հասցրած այս նկարազարդ օրացույցի յուրաքանչյուր ամսվա էջը զարդարված է Գյումրին ու տարբեր եվրոպական քաղաքներ պատկերող հեղինակային նուրբ գծանկարներով: Զետեղված են քաղաքիս մասին նշանավոր ու ճանաչված մարդկանց ասույթներ, այստեղ գործող տարատեսակ սպասարկման օբյեկտները ներկայացնող տեղեկություններ: Ամանորի շեմին այն լավ ընտրություն կարող է լինել ինչպես իրար, այնպես էլ քաղաք ու հանրապետություն ժամանող հյուրերին նվիրելու համար:

«Լեւոն Լաճիկյանի օրացույցը մշտապես իմ սեղանին է,- կարդում ենք «Բուկինիստ» գրախանութների ցանցի տնօրեն **Խաչիկ Վարդանյանի** խոսքը:-




Ամեն անգամ դրան նայելիս ես ակամա տեղափոխվում եմ պոեզիայի կամ դասական երաժշտության աշխարհ»:

Թող խաղաղ, բարեբեր տարվա օրացույց լինի:

**Գ. Ս.**

## Նեսիմ Օվադյա Իզրաիլ.
## Հայամետ հրեան Թուրքիայից

⇨4 Թուրք գիտնականներից եւ ընթերցողներից դրական արձագանքներ եմ ստացել երկու գրքերի վերաբերյալ: Հնարավոր է՝ եղել են մի քանի բացասական մեկնաբանություններ, բայց ընդհանուր առմամբ առ այսօր որեւէ խնդիր չեմ ունեցել: Իհարկե, ամեն ինչ կարող է փոխվել վաղը: Այդ տարբերակը միշտ պետք է հիշել:

**-Ինչպե՞ս եք տեսնում Թուրքիայի հայ եւ հրեա փոքրամասնությունների ապագան:**

-Իմ ազգանունն Իզրաիլ է, որը ժառանգել եմ հորիցս: Երբեք չեմ մտածել այն փոխելու մասին: Ես հարազատներ ունեմ Իսրայելում: Վերջին երկու տարիներին Իսրայելի քաղաքականության շատ կողմերի հետ համաձայն չեմ եղել եւ արտահայտել եմ իմ ընդդիմությունը սոցիալական ցանցերում: Բայց, ինչպես նշեցի, իրավիճակը կարող է փոխվել, եւ ես գիտակցում եմ, որ միգուցե ինձ դժվար օրեր սպասվեն:

Այս ամենից ելնելով՝ կարող եմ ասել, որ Թուրքիայում ինչպես հայ, այնպես էլ հրեա փոքրամասնությունները հաճախ անցնում են անհանգստության բարձր փուլերով: Դա նման է փշալարի վրա նստած լինելուն: Երկու համայնքներն էլ շարունակաբար եւ համակարգված կերպով փոքրանում են:

Այսօր Հայաստան-Թուրքիա հարաբերությունները ընթանում են ավելի հանգիստ հունով: Իսրայել-Թուրքիա հարաբերությունները գուցե այս պահին լավագույն վիճակում չեն, բայց ԱՄՆ-ի ներգրավմամբ հնարավոր է՝ դուրս գան դեպի ավելի հարթ ճանապարհ:

Եթե իմ կանխատեսումները ճիշտ են, ապա Թուրքիայի հայ եւ հրեա փոքրամասնությունները կշարունակեն պահպանել իրենց գոյությունը...

**-Նեսի՛մ, մաղթենք, որ այլեւս դժվար օրեր չապրենք... եւ որ տեւական ու արժանապատիվ խաղաղություն հաստատվի մեր տարածաշրջանում ու ողջ աշխարհում...**

# Վլադիմիր Պուտինի ամենամյա մամուլի մեծ ասուլիսը

**ԳՈՀԱՐ ԲՈՏՈՅԱՆ**
**Մոսկվայում «Ազգ»-ի հատուկ թղթակից**

*Դեկտեմբերի 19-ին ՌԴ մայրաքաղաք Մոսկվայի «Գոստինի Դվոր» դահլիճում տեղի ունեցավ ՌԴ նախագահի **Վլադիմիր Պուտինի** մամուլի ամենամյա մեծ ասուլիսը զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների հետ՝ զուգորդված քաղաքացիների հետ հեռախոսակապի «Ուղիղ գծով»:*

Ասուլիսին մասնակցելու համար հավատարմագրվել էին ռուսական եւ արտասահմանյան ԶԼՄ-ների հարյուրավոր ներկայացուցիչներ, այդ թվում նաեւ ՌԴ-ում «***Ազգի***» *հատուկ թղթակից* ***Գոհար Բոտոյանը****, որը ներկա էր դահլիճում: Ի դեպ, հայազգի լրագրողներից միջոցառմանը ներկա էր միայն մեր թղթակիցը:*

2001 թվականից սկսած՝ նման ամփոփիչ ասուլիսների Պուտինը մասնակցել է 19 անգամ, որից 15-ը՝ որպես պետության ղեկավար, 4-ը՝ որպես կառավարության նախագահ:

Այս տարի ասուլիսը տեւեց 4 ժամ 27 րոպե, նախագահին ուղղվել էին շուրջ ութ տասնյակ հարց, պետության ղեկավարը մեկնաբանեց ավելի քան 70 թեմա:

Քննարկվող թեմաների շրջանակը լայն էր՝ ընդգրկելով արտաքին քաղաքականությունը, անվտանգության խնդիրները, տնտեսությունն ու սոցիալական ոլորտը, ինչպես նաեւ քաղաքացիներին հուզող առօրյա հարցերը:

Ասուլիսի առանցքային թեմաներից մեկը Ուկրաինայի շուրջ շարունակվող պատերազմն էր: Պուտինը հայտարարեց, որ Ռուսաստանը պատրաստ է քաղաքական կարգավորման, սակայն, նրա խոսքով, խաղաղ գործընթացի իրագործումը պայմանավորված է հակառակ կողմի եւ նրա դաշնակիցների դիրքորոշմամբ: Նախագահը նշեց, որ ռազմաճակատում նախաձեռնությունը ռուսական կողմի ձեռքում է, եւ այդ իրողությունը պետք է հաշվի առնվի ցանկացած բանակցային գործընթացում:

Նա անդրադարձավ նաեւ ԱՄՆ-ի խաղաղարար առաջարկների, հնարավոր զինադադարի եւ բանակցությունների թեմային՝ ընդգծելով, որ անվտանգության հիմնարար երաշխիքների բացակայության պայմաններում խոսել կայուն խաղաղության մասին՝ վաղաժամ է:

«Նախագահ Թրամփը լուրջ ջանքեր է գործադրում այս հակամարտությունը ավարտելու համար,-ասաց Պուտինը:- Նա դա անում է լիակատար անկեղծությամբ: Ավելին՝ նախագահ Թրամփի հետ մեր հանդիպման ընթացքում Անքորիջում մենք համաձայնեցինք եւ գործնականում ընդունեցինք նրա առաջարկները: Հետեւաբար ասել, թե մենք ինչ-որ բան մերժում ենք, ամբողջովին սխալ է եւ որեւէ հիմք չունի:

Մոսկվայում անցկացված նախնական հանդիպումների ընթացքում մեզ առաջարկություններ էին ներկայացվել եւ




մեզանից ակնկալվում էին որոշակի փոխզիջումներ: Երբ ես ժամանեցի Անքորիջ, անմիջապես նշեցի, որ դրանք մեզ համար հեշտ որոշումներ չեն լինելու, սակայն մենք համաձայնում ենք առաջարկվող փոխզիջումներին»:

«Գնդակը ամբողջությամբ մեր արեւմտյան հակառակորդների դաշտում է, առաջին հերթին՝ Կիեւի ռեժիմի ղեկավարների, եւ այս դեպքում հատկապես նրանց եվրոպական հովանավորների: Մենք պատրաստ ենք թե՛ բանակցությունների, թե՛ հակամարտության խաղաղ կարգավորման»:

ՌԴ նախագահը կոշտ գնահատականներ հնչեցրեց ՆԱՏՕ-ի ընդլայնման եւ Ռուսաստանի սահմանների մոտ ռազմական ակտիվության աճի վերաբերյալ: Նրա խոսքով՝ եվրոպական անվտանգության ներկայիս համակարգը կառուցվել է առանց Ռուսաստանի շահերը հաշվի առնելու, ինչը երկարաժամկետ հեռանկարում վտանգ է ներկայացնում ամբողջ մայրցամաքի համար:

Առանձին անդրադարձ կատարվեց նաեւ արեւմտյան երկրների կողմից ռուսական պետական ակտիվների սառեցման եւ հնարավոր բռնագանձման հարցին: Պուտինը այդ քայլերը բնութագրեց որպես միջազգային իրավունքի կոպիտ խախտում եւ ընդգծեց, որ նման գործողությունները հարվածում են համաշխարհային ֆինանսական համակարգի վստահելիությանը:

Ներքին օրակարգի շրջանակում նախագահը խոսեց Ռուսաստանի տնտեսության վիճակի մասին՝ նշելով, որ արտաքին ճնշումներին եւ պատժամիջոցներին հակառակ, տնտեսությունը շարունակում է գործել: Նա անդրադարձավ տնտեսական աճի, ինֆլյացիայի վերահսկման, բյուջետային կայունության եւ սոցիալական պարտավորությունների կատարման թեմաներին:

Քաղաքացիների հարցերը հիմնականում վերաբերում էին կենսաթոշակներին, սոցիալական վճարներին, առողջապահությանը, բնակարանային խնդիրներին եւ մարզերի զարգացման անհավասարությանը: Պուտինը մի շարք դեպքերում հանձնարարեց համապատասխան գերատեսչություններին տեղում ուսումնասիրել խնդիրներն ու առաջարկել լուծումներ:

Եղան հարցեր առօրյա կյանքի, երիտասարդության խնդիրների, նույնիսկ անձնական բնույթի դիմումներ, որոնք եւս մեկ անգամ ընդգծեցին «Ուղիղ գծի» գաղափարը՝ նախագահին հասանելի դարձնել հասարակ մարդու խնդիրներին:

Լրագրողների աննախադեպ մեծ թվաքանակի պատճառով «**Ազգ**» թերթի թղթակցին, ցավոք, այդպես էլ չհաջողվեց հարց հնչեցնել: Մինչդեռ այս անգամ պատրաստված էր մի հարց, որը վերաբերում էր հայ-ռուսական հարաբերությունների ներկային եւ ապագային:

Տարվա ամփոփիչ մամուլի ասուլիսը եւս մեկ անգամ ցույց տվեց, որ այս ձեւաչափը Ռուսաստանի նախագահի համար ոչ միայն հաշվետվություն է, այլեւ քաղաքական ազդակների հստակ փոխանցման միջոց: Այն ամփոփում է տարվա հիմնական զարգացումները եւ միաժամանակ ձեւակերպում առաջիկա առաջնահերթությունները՝ արտաքին քաղաքականության, անվտանգության եւ ներքին սոցիալ-տնտեսական կառավարման ոլորտներում:

# Նոր տարի՝ քաղաքական հին կրկեսով եւ խաբված հանդիսատեսով

⇨1 Վերեւում նկարագրված մեր այսպես կոչված քաղաքական կյանքը, ազգային, հայրենասիրական, թե հեղափոխական ածականներով զարդարված լինի, թե ոչ, դանդաղ ներգործող թույնի նման աննկաս այնպես է ազդել մեր հանրության հոգեբանության վրա, այնպես է հիասթափեցրել նրա տարբեր շերտերին ամեն ինչից, այնպես է հոգնեցրել, որ հայ մարդկանց լայն շրջանակները չեն հավատում իրենք իրենց, պատասխանատվություն չեն զգում Հայաստանում տեղի ունեցողի համար, չեն հուսում, որ իրենք կարող են ընթացք փոխել, ինչ-որ բան նախաձեռնել, կամք պարտադրել...

Նրանց դիմադրողականությունն ամենօրյա դոզայով շարունակում են թուլացնել, ավանդական մեթոդներին նոր զինատեսակներ են ավելացել՝ սոցիալական ցանցերը, որոնք նույնպես անում են իրենց սեւ գործը: Անգամ օդն է հագեցած աներեւույթ ալգորիթմներով, որոնք մի խնդիր ունեն՝ քաղաքացուն դարձնել անկամ, ենթարկվող, հեշտ կառավարվող, որը չի զատի ճշմարիտն ու կեղծը, չի նույնականանա իր ինքնության հետ եւ չի դիմադրի: Մեծ նպատակը՝ նոնց վերարտադրվել են տարիներով, նույն կերպ իշխանության բարիքների տերը լինել առաջիկայում՝ մինչեւ այժմ ասպարեզում եղածներով կիսելով եւ իրենցով անելով բոլորիս ապագան:

Ամեն ինչի մեջ քարոզչություն կա՝ այս կողմում, մյուս կողմում, երրորդում, մենք ոչ թե ապրում ենք, այլ քարոզի տեղատարափն ենք մի կերպ մարսում ամեն օր՝ ամբողջովին քարոզների մատերիալ դարձած: Մեզնից խլված է կյանքի համն ինքնուրույն զգալու կարողությունը, ռեսուրս ունեցող ամեն մեկը մեզ ստիպում է այդ համն առնել ռեսուրսատիրոջ զգայարաններով եւ պատկերացումներով: Հեռանում-հեռանում ենք Սովետից, նրա պարտադրվող-ճնշող. քարոզչական-կեղծ ապրելակերպից , բայց դույզն ինչ չենք հեռանում, որովհետեւ դրան նմա՛ն, դրան հավասա՛ր այլ ամենօրյա քարոզչությունների գրոհի տակ ենք, որովհետեւ ոսկրացած համակարգն այդպես էլ չկարողացանք փոխել, որովհետեւ կոմսոմոլական-սուրուական հին ձեւով վազ ենք տալիս մեզ պարտադրվող կառուցվածքների մեջ՝ հուսալով, որ մի բան էլ մեզ համար կպոկենք: Որովհետեւ չհասունացանք այնքան, որ ինքներս նախաձեռնենք մեր կյանքի փոփոխությունը, ու դա չսպասենք ուրիշներից: Որովհետեւ չենք կրթվում այնքան, որ տարբերենք արտաքին ու ներքին ծուղակները:

Ու լուռ նայում ենք մեր իմիտացիոն ներքին կյանքին, համակերպվում դրան: Նայում ենք, թե ո՞նց է յոթ տարի իշխանությունն օրակարգեր թելադրում բոլորին, այդ թվում օրվա ընդդիմությանը, նայում ենք, թե ո՞նց են իրենց ընդդիմություն անվանողները սահուն վերցնում այդ օրակարգերը՝ ոչ մի սեփական օրակարգ չառաջադրելով, ոնց են ձախողվածներն անվերջ վերադառնում:

Նայում ենք՝ ո՞նց են երկրի ինստիտուտներն անդեմ ու անկամ տեղավորվում միակենտրոն, համարյա ավտորիտար կառավարման մեջ՝ առանց օրենսդրորեն իրենց վերապահված լիազորություններն իրացնելու: Օրինակով բառերի մերկությունը ծածկեմ: Ունենք Ազգային ժողով, որ օրենսդրորեն հակակշռեր պիտի գործադիրին, անգամ գերադաս լիներ նրանից, որովհետեւ ստատուսով ամենաբարձր կառույցն է: Ունե՞նք այդպիսի ԱԺ, իհարկե ո՛չ, ունեցա՞նք ԱԺ այնպիսի նախագահի, որ իր բարձր ստատուսին համապատասխան գործոն դառնար եւ անկախ խմբային շահերից՝ երկրի քաղաքական թիվ մեկ պաշտոնյան զգար իրեն, չստորադասեր իր պաշտոնեությունը կուսակցական ղեկավարի ամբիցիաներին (Սովետի կոմկուսի ականջը կանչի), իհարկե ո՛չ: Ունե՞նք երկրի այնպիսի նախագահ, որ իրոք իրացներ իրեն որպես երկրի գլուխ, իհարկե ո՛չ: Այդ պաշտոնյաները նախագահ եւ ԱԺ նախագահ են աշխատում գործադիրի ղեկավարի, իսկ ավելի ստույգ իշխող կուսակցության ղեկավարի մոտ, նրանք չեն համարձակվում իրացնել իրենց բարձր պաշտոնների՝ պետությանը նույնական ողջ նշանակությունն ու լիազորությունների համալիրը, երբ հարկ կա մոտեցում հակակշռելու:

Լավ, յոթ տարվա առաջին տարիներին միգուցե դա դեռ կարելի էր ընկալել՝ նրանք պարտավորված էին իրենց բերող ուժին ու նրա ղեկավարին, բայց պետություն ներկայացնելը, նրա համար պատասխանատու զգալը փորձով գալիս է, ախր, ինչո՞ւ դա մեր դեպքում այդպես էլ տեղի չունեցավ, ինչո՞ւ չաշխատեց զսպման եւ հավասարակշռման մեխանիզմը:

Ու այս իմիտացիոն կյանքով, որի մեջ հանգիստ կարելի է տեղավորել մեր հոգեւոր կյանքի փոխակերպումները, հոգեւորականների եւ եկեղեցու շուրջ կատարվողը՝ երկկողմանի մեղավորությամբ, մտնում ենք ընտրական տարի, այո:

Ի՞նչ վերլուծես, ամեն ինչ այն գլխից էլ պարզ է, օրակարգ թելադրող իշխանությունը ընդդիմափոխություն է անում, որ իրեն հարմար ընդդիմությամբ նոր խորհրդարան ձեւավորի, քանի որ արտաքին ու ներքին նախագծումներից դուրս ուժեր այդպես էլ չստեղծվեցին, երկրի խնդիրներին ձեռք զարկող եւ պատասխանատվությունը ստանձնելու պատրաստ մարդիկ, որոնք զանազան խաղերի մասնակից կամ ազդեցությունների կրող չեն՝ այդպես էլ առաջ չեկան: Ամեն ինչ հին է այնպես, ինչպես միշտ հայկական կյանքում է եղել՝ նշանակովի մարդիկ, քաղաքական թատրոն ու կրկես եւ խաբված հանդիսատես:

Չգիտենք, թե ի՞նչ կփոխվի Նոր տարում:

Շնորհավոր Ամանոր, Աստված պահպանի Հայաստանը:

## Իմաստաբանական բառարան

### *Ականջը քաշելու համարժէք միայն*

«Ունկն» բառի հոգնակին ականջն է, հետեւաբար «ականջ» ասելով՝ հասկանում ենք երկուսը միասին՝ երկու ականջ (գրաբարյան տարբերակով՝ ականջք):

Ականջի գործառույթները բազմաթիվ են ու բազմազան: Բայց դրանցից գլխավորը դաստիարակչականն է՝ այն քաշելու կամ ոլորելու միջոցով:

Ականջի մեկ այլ կարեւոր գործառույթ է դեմքի վրա ակնոցի ամրակայումը:

Ականջը երբեմն նաեւ թույլ չի տալիս, որ գլխարկն իջնի աչքերի վրա:

Ականջը բնության կողմից տրված է կանանց, իսկ ինչո՞ւ ոչ՝ նաեւ որոշ առանձնահատուկ տղամարդկանց, որպեսզի բլթակին օղաձեւ զարդեր ագուցեն եւ իրենց լրացուցիչ փայլ ու շքեղություն հաղորդեն: Իսկ իմաստուն մարդկանց խրատական խոսքը չմոռանալու համար, անկախ սեռական պատկանելությունից, ականջին օղ անելը հրաշագործ հատկություն ունի:

Սիրահար զույգերին ամուսնական կապանքով վերջնականապես կաշկանդելու համար էլ ականջ կտրելու դերը անթերագնահատելի է:

Ականջը նաեւ այն օրգանն է, որը քորելով՝ հնարավորություն ես ունենում կողմնորոշվելու անելիքների հարցում:

Ականջին վերապահված է նաեւ նախազգուշացնող գործառույթ, հատկապես այն ժամանակ, երբ ականջը կարմրում ու տաքանում է:

Հայկական բառարանները հուշում են, որ ականջն ունի նաեւ լսելու գործառույթ, հետեւաբար՝ բանբասանքը բերանից բերան փոխանցելու ունակություն:

Այս ամենից բացի, ականջը սրվելու, լրտեսության միջոց դառնալու, իր մեջ սուս խոսքեր կլանելու հատկությամբ էլ է օժտված:

Չէ՞ որ **Պարույր Սեւակն** է նկատել.

*Ականջը սրած՝ ականջ է դնում,*
*Ականջի պոչով նա մեզ լրտեսում,*
*Հետո գնում է իր նման մեկի*
*Ականջը լցնում՝ սեր փսփսում...*
*Նման մարդուկի ամենախոշոր*
*Բրդուջը պիտի ականջը թողնել,*
*Իսկ մենք հայրաբար եւ հիմարաբա՜ր*
*Այս հանցագործի ականջն ենք քաշում:*

**Գ. ԱՌԱՔԵԼՅԱՆ**

# Ո՞ւմ է հարկավոր այս վտանգավոր ընթացքը



Աշխարհում հասարական-քաղաքական հեղաբեկումների ու ցնցումների առումով ամենավաս բաները հաճախ ծրագրվում, կատարվում են ամենալավ կարգախոսների ներքո: Հայ Առաքելական եկեղեցու դեմ վարչապետ Փաշինյանի ու իր կառավարող խմբի այս արդեն սահման չճանաչող հակաօրինական տգեղ, ավերիչ արշավը, ինչ փաթեթավորմամբ էլ որ իրենք այն փորձեն ներկայացնել, իր դրսեւորումներով կարող է ծառայել, նվազագույնը, մեր իրականությունում ազգային այդ անսասան կառույցի դերի նսեմացման նպատակին: Առավել եւս եթե, ինչպես նշում են տեղի ու արտերկրի տարբեր մեկնաբաններ, այն աշխարհաքաղաքական կամ համենայն դեպս արտաքին ուղղորդվածություն ունի:

Երբ իրենց շրջիկ անբարեխոհ, ապստամբական պատարագը իշխանության ուժով, անգամ դեկտեմբերի 7-ի դառն խորհուրդը չհարգելով այդ օրը բերում են Գյումրու Սբ. Յոթվերք՝ քաղաքիս երբեւէ այդպիսի անհարգալից «այցելության» չենթարկված Մայր եկեղեցի, դա քաղաքացու տեսանկյունից արդեն իսկ աններելիության սահմանից այն կողմ է: Իսկ արդեն հայ հավատի սրբություն սրբոց Միածնաէջ Մայր Աթոռի ու Մայր տաճարի տարածքի դեմ կրկնվող ոտնձգությունները դժվար է բառերով գնահատել...

Նրանք, ովքեր կոչված են երկիրը պաշտպանելու արտաքին չդադարող մարտահրավերներից, իրենք են նոր մարտահրավերներ ստեղծում երկրի ներսում: Հարց է առաջանում ՝ ինչո՞ւ...

Հիշում ենք, չէ՞, Ամենայն Հայոց երջանկահիշատակ կաթողիկոս **Վազգեն Առաջին Վեհափառի** ազնիվ խոստովանությունը. «Ես քրիստոնեությունն ընդունում եմ այնքանով, որքանով այն ծառայում է իմ ազգին»: Այսպես ծառայելով այն մեզ համար դարձել, դարերի հոլովույթում եղել ու մնում է իրոք ազգային կառույց: Դժվար է կարծել, թե այսօր մեր ազգային Եկեղեցին այսպես պառակտողներն ու հալածողներն իրենք չգիտեն, որ այս ամենով նաեւ Սահմանադրություն ու ամեն կարգ են խախտում, վաս նախադեպ եւ օրինակ ծառայելով քաղաքացիների համար: Բայց անում են, որովհետեւ նման բաները եւ պետական մակարդակով մեզ հրամցվող, պարտադրվող ու շատ այլ բաներ ՀՀ-ում այժմ կատարվում են մեկ մարդու կամքով, քմահաճույքով ու մասի շարժումով: Ահա սահմանադրական կարգին վերաբերող մի էական օրենսդրական խնդիր:

Երբ նախորդ իշխանության օրոք (ա՜խ այդ «նախկինները»...) նախապատրաստվում էին Սահմանադրության 2015 թ. փոփոխությունները, որոնցով Հայաստանը կիսանախագահականից անցնում էր կատարելու խորհրդարանական կառավարման, նախատեսվող փոփոխությունների բնույթի մասին «**Ազգի**» մի խմբագրականը վերնագրված էր «Խորհրդարանակա՞ն, թե՞ վարչապետական կառավարում»: Այդ փոփոխությունները, ըստ տարածված արտահայտության, «կարված էին» երկրի այն ժամանակվա նախագահի, ինչպես հետո պարզվեց՝ արդեն որպես վարչապետ հանրապետությունը ղեկավարել ցանկացող **Սերժ Սարգսյանի** «հագով», բայց դրանցով ընձեռվող փաստորեն անսահմանափակ իշխանությունը շատ շուտով բաժին հասավ մինչ այդ ընդդիմադիր **Նիկոլ Փաշինյանին**:

2018-ին վերջինիս իշխանության գալու հասարակական ոգեւորության աղմուկին ի տես գրելով «Մեկ տարի հետո գովենք», անգամ չէինք կարող պատկերացնել՝ այդ իշխանության այսքան տարիների ընթացքում որտեղից ուր կարող էինք հասած լինել... Բոլոր այն մեզ պատուհասած դժբախտություններն ու աճած մարտահրավերները, ազգային արժեքային համակարգի դեմ բոլոր մեղանչումները, որոնցից մեր հասարակության ուշադրությունն ու էներգիան նաեւ փորձում են ամեն օր տարբեր նման եւ այլ բաներով շեղել, կապված են մեկ անձի ընձեռված այդ անսահմանափակ իշխանության, անհրաժեշտ իրական հակակշիռների բացակայության հետ: Այս իշխանության վերարտադրության պարագայում դրանք խորանալու են...

Երեւի հարկ չկա ապացուցելու, որ որեւէ չվերահսկվող միանձնյա իշխանություն ի վերջո կարող է դառնալ բռնապետություն: Նայած ում ձեռքում է այդ զորեղ ու նաեւ վտանգավոր զենքը: Այստեղից՝ հարակից երկրորդ խնդիրը. ո՞ւր է այն իրավական գործուն մեխանիզմը, որով կարելի կլինի բռնել թեկուզ երկրի ղեկավարի ձեռքը կամ նրան պատասխանատվության կանչել օրինազանցության, պաշտոնազանցության ու պաշտոնի չարաշահման, նման եւ այլ մեղանչումների դեպքում:

Եվ ընդհանրապես, այսպես շարունակվել չի կարող: Երկրի ներսում անվերջ պառակտում, թշնամանք ու ատելություն սերմանելու, հուղաներ աճեցնելու, ազգային հենասյուներ քանդելու այս վտանգավոր ընթացքը պետք է կանգնեցվի:

# Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախումբը՝ այսուհետ Չեքիջյանի անունով


Լուսանկարը՝ Սպենդիարյան օպերայի եւ բալետի կայքից

«Ես փոսի դիրիժոր չեմ»: Տարիներ առաջ մեզ հետ ծավալուն զրույցից մաեստրոյի այս նախադասությունը հիշեցի, երբ դեկտեմբերի 23-ին Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային թատրոնի բեմում փոսը տախտակամածով փակել էին, նվագախմբի ողջ կազմը չէր տեղավորվել նախաբեմում, փողայինները նստել էին աջ եւ ահյակ՝ կողային հատվածներում, միջնաբեմում Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախումբն էր, կատարողների հզոր, մարդաշատ կազմ, իսկ ինքը դիրիժորական վահանակի առջեւ, նստած էր ղեկավարում Բեռլիոզի «Ռեքվիեմը»: Նույն օրն իր 97-ամյակն այսպես էր նշում բազմաթիվ շքանշանների կողքին նաեւ պետական մրցանակների դափնեկիր, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ, պրոֆեսոր, Ազգային հերոսի եզակի կոչում ստացած Հովհաննես Չեքիջյանը: Իր ասած «փոսի դիրիժոր» շատ կարճ եղել է՝ 1958-1961-ին Ստամբուլի օպերայի երաժշտական ղեկավարն է եղել, 1982-87-ին աշխատել է Սպենդիարյան օպերայի եւ բալետի ակադեմիական թատրոնի գլխավոր տնօրեն, բայց 1961 -ից Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախմբի գեղարվեստական անփոփոխ ղեկավար ու գլխավոր դիրիժոր Չեքիջյանին վառ հիշում ենք կանգնած չափ տալիս, երբ համերգի վերջում բեմում նրա հասակը շարունակ բարձրանում էր, ինքը դառնում վիթխարի, հզոր երեւույթ: 97- ամյակին մեզ պարգեւած ընծան զորեղ խիզախում էր՝ Բեռլիոզն ինչպե՞ս է երկնել այս աստվածային երաժշտությունը միտքն անընդհատ զուգահեռ էր ստեղծում՝ Չեքիջյանն ինչպե՞ս է փոխանցում դրա առեղծվածը:

Երեկ ՀՀ կառավարության նիստում հավանության արժանացավ «Հայաստանի պետական ազգային ակադեմիական երգչախումբ» ՊՈԱԿ-ը «Հ. Չեքիջյանի անվան Հայաստանի ազգային ակադեմիական երգչախումբ» ՊՈԱԿ-ի վերանվանելու հարցը: Փոփոխության նպատակն է Հովհաննես Չեքիջյանի երկարամյա վաստակն արժեւորելը:

**ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ**

«ԱԶԳ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԼԴ տարի
Հրատարակիչ
**«ՎԱՀԱՆ ԹԷՔԷՅԱՆ» սոցիալ-մշակութային հիմնադրամ**
Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48
**e-mail:** info@azg.am
azgdaily@gmail.com
**www.azg.am**
*Գլխաւոր խմբագիր*
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ
*Հաշվապահութիւն (գովազդ)*
հեռ. **010 582960**
*Համակարգչային շարուածքը՝*
«Ազգ» թերթի
"AZG" Weekly
Editor-in-chief H.AVEDIKIAN
Phone: 374 010 582960

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Վահան Թէքեյան» սոցիալ-մշակութային հիմնադրամ», Երեւան, Սայաթ-Նովա 21Ա, Տարածք 48, Երեւան 0001: Պետական գրանցման վկայականի համարը՝ 286.110.1041780, տրուած՝ 25.10.2018 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիքեան: Ստորագրուած է տպագրութեան 25.12.2025, գինը՝ 200 դրամ, տպաքանակը՝ 800 օրինակ, տպագրւում է «Գինդ» տպարան ՍՊԸ, ք. Երեւան, Բագրատունյաց 70ա: